ՀՀ ԱՆ ՅՈԼՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Yeolyan Hematology and Oncology Center, Ministry of Health of Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՂՑԿԵՂԻ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
Pediatric Cancer and Blood Disorders Center of Armenia

ՀՀ, 0014, Երևան, Ներսիսյան 7, հեռ. +374 10 28 38 00 • 7 Nersisyan St, Yerevan, 0014, Armenia • URL: www.blood.am

Երեխա՝ Ս[redacted] Ալեքսանդր [redacted]

Ծննդյան ամսաթիվ՝ 19.02.2021թ.

Կլինիկական ախտորոշում՝ Իմուն թրոմբոցիտոպենիա, քրոնիկ ընթացք

2023թ.-ի հունիսի վերջին երեխայի մոտ ախտորոշվել է Իմուն թրոմբոցիտոպենիա (PLT-10x10⁹/L) ՀՀ ԱՆ Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում: Ընդունվել է մանկական արյունաբանության բաժանմունք, ստացել է հորմոնալ բուժում պրեդնիզոլոնով՝ 5օր տևողությամբ, աստիճանական իջեցումով: Դուրս գրվելիս թրոմբոցիտների թիվը՝ PLT-259x10⁹/L: Երեխան վերցվել է հսկողության ԱԿ-ի մանկական արյունաբանության դիսպանսերային բաժանմունքում: 13.07.23թ-ին կրկին ընդունվել է թրոմբոցիտոպենիայի (PLT-7x10⁹/L) կապակցությամբ, ստացել բուժում պրեդնիզոլոնով, թրոմբոցիտների թիվը աճել է մինչև PLT-28x10⁹/L, որից հետո ստացել է նաև ներերակային իմունոգլոբուլին՝ օկտագամ: Դուրս գրվելիս թրոմբոցիտների թիվը՝ PLT-406x10⁹/L: Նոյեմբեր ամսվա վերջին դիմել են մանկական արյունաբանության դիսպանսերային բաժանմունք՝ գանգատվելով սրունքներին առկա եզակի կապտուկներից: Կատարված ԱԸՔ-ով PLT-12x10⁹/L, նշանակվել է դիցինոն, ասկոռուտին: Դինամիկայում կապտուկները ավելացել են մարմնի տարբեր հատվածներում և երեխան ընդունվել է մանկական արյունաբանության բաժանմունք, ստացել է հորմոնալ բուժում պրեդնիզոլոնով՝ 5օր տևողությամբ, աստիճանական իջեցումով: Դուրս գրվելիս թրոմբոցիտների թիվը՝ PLT-304x10⁹/L: Մի քանի օր անց ջերմել է սուբֆեբրիլ թվերի, տանը ընդունել է իբուպրոֆեն, ունեցել է թեթև քթային արյունահոսություն, դեմքին նկատել են պետեխիաներ: Դիմել են ԱՈՒԿ, կատարված ԱԸՔ-ով թրոմբոցիտների թիվը՝ PLT-5x10⁹/L: Հաշվի առնելով դեմքին առկա պետեխիաները, քթային արյունահոսությունը, սկսվել է բուժում պրեդնիզոլոնով: 07.12.23թ.-ին կատարված ԱԸՔ-ով PLT-170x10⁹/L, որոշվել է դեռևս ձեռնպահ մնալ ն/ե իմունոգլոբուլինից: Մի քանի օր անց նկատել են պետեխիաներ: Կատարված ԱԸՔ-ով՝ PLT-21x10⁹/L, կատարվել է ն/ե իմունոգլոբուլինի ներարկում: Թրոմբոցիտների թիվը աճել է, սակայն դինամիկայում կրկին նվազել: Բուժումը շարունակվել է ռնոլեյդ (50մգ/օր) դեղորայքով, որը հիվանդը ստանում է շարունակական:

Բուժող բժիշկ՝ Մ.Տ. Պետրոսյան

անուն, ազգանուն

ստորագրություն

_05._12._2025թ.